ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Հաղթահարել

Զգացմունքային

Պարերազմները

Ամրծո Խոսքի

Զորությամբ

Օգնի՛ր ինձ. ես

ԸՆԿՃՎԱԾ ԵՄ

Օգնիր ինձ, ես

ԸՆԿՉՎԱԾ ԵՄ

Հաղթահարել զգացմունքային պատերազմները
Աստծո խոսքի զորությամբ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Ջոյս Մայեր
Օգնի՛ր ինձ, ես ընկճված եմ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն 5

Մաս 1

Արձակիր Աստծո ուրախությունը

1. Ընկճվածության փուլերը 9
2. Ցնծության զորությունը 21
3. Ժպտալը լուրջ գործ է 31
4. Երգե՛ք և աղաղակե՛ք ուրախությամբ 41
5. Անմիջապե՛ս հակառակվեք սատանային 51
6. Մերժվածություն, ձախողում և անարդարացի համեմատություններ 67
7. Լսե՛ք, թե ինչ է ասում Աստված ձեր մասին 87

Ամփոփում 89

Մաս 2

Սուրբգրային խոսքեր

Սուրբգրային խոսքեր՝ հաղթահարելու ընկճվածությունը 93

Աղոթք՝ ընկճվածության դեմ պայքարելու համար 97

Աղոթք՝ Աստծո հետ անձնական հաղորդակցման համար 99

Հեղինակի մասին 101

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Շատերն ընկճվածության (տրամադրության անկումների) հետ կապված խնդիրներ ունեն: Ընկճվածության հիմքում ընկած պատճառները շատ են, և պայքարի տարբեր միջոցներ կան դրանց դեմ: Մի մասն արդյունավետ է, մյուս մասը՝ ոչ: Մի մասն օգնում է ժամանակավորապես, բայց չի կարող մշտապես վերացնել այդ երևույթը: Բայց բարի լուրն այն է, որ Հիսուսը կարող է ոչ միայն բուժել ընկճվածությունը, այլ նաև ընդմիշտ ազատագրել դրանից: Նմանապես, Նա կարող է բժշկել ցանկացած այլ հիվանդություն: Մի անգամ, երբ պատրաստվում էի խոսել ընկճվածության թեմայով, հստակորեն տեսա, որ Աստված դրա դեմ պայքարելու համար մեզ շնորհել է Իր ուրախությունը: Դա այնքան պարզ էր, որ կարծես կինոնկար էի դիտում:

Եթե դուք Հիսուս Քրիստոսի հավատացյալներն եք, Նրա ուրախությունը ձեր մեջ է: Շատ հավատացյալներ գիտեն այս ճշմար-

տությունը, բայց նույնիսկ չնչին պատկերացում չունեն, թե ինչպես պետք է դա ազատ արձակեն: Մենք պետք է գործնականում տեսնենք այն ամենը, ինչ մեզ է պատկանում Հիսուս Քրիստոսում: Աստծո կամքն է, որ իրականում ապրենք նաև ուրախությունը:

Շատերը, ներառյալ Սուրբ Հոգով լցված քրիստոնյաները, ընկճվածության պատճառով ոչ միայն փոքր բախումներ ունեն, այլ նաև մեծ խնդիրներ: Ես նույնպես ընկճվածության հետ կապված խնդիրներ ունեի: Բայց շնորհակալ եմ Աստծուն, որ սովորեցրեց թույլ չտալ բացասական զգացողությանը և ընկճվածությանը ղեկավարել ինձ: Ես սովորեցի Տիրոջ ուրախությունն արտահայտել իմ կյանքում:

Այս գրքի պատգամը շատ պարզ է և զորավոր: Կարևոր չէ, թե ինչ ենք ապրել անցյալում կամ ինչ ենք ապրում հիմա. եթե մենք հավատացյալ ենք, ուրեմն Աստծո ուրախությունը մեր մեջ է: Մենք, պարզապես, պետք է սովորենք, թե ինչպես արտահայտենք այդ ուրախությունը՝ ընկճվածությունը հաղթահարելու համար:

Մաս 1

ԱՐՁԱԿԻ՛Ր ԱՍՏՑՈ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

1

ԸՆԿՉՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

«Սպասելով սպասեցի Տիրոջը, և Նա դեպի ինձ նայեց և աղաղակս լսեց: Եվ ինձ հանեց կորստի հորից՝ տիղմոտ ցեխից, և վեմի վրա կանգնեցրեց ոտքերս և գնացքս հաստատեց»:

Սաղմոս 40.1,2

1

Ընկճվածության փուլերը

Ըստ Վեբսթերի 1828թ. բառարանի՝ ընկճվածությունը «հոգու տկարություն, ճնշվածություն» կամ «տխուր վիճակ, համարձակության պակաս, ուժասպառ վիճակ» է:

Ովքե՞ր են տառնպոիմ ընկճվածությունից

Կյանքի տարբեր ոլորտներում գտնվող մարդիկ՝ բժիշկներ, իրավաբաններ, ուսուցիչներ, բանվորներ, տնային տնտեսուհիներ, պատանիներ, փոքրիկ երեխաներ, մեծահասակներ, ամուրիներ, այրի կանայք, տղամարդիկ և նույնիսկ հոգևոր ծառայողներ ընկճված են եղել: Աստվածաշնչում խոսվում է այն թագավորների և մարգարեների մասին, ովքեր ինչ-որ ժամանակ ընկճվել են: Դավիթ թագավորը, Հովսանը և Եղիան երեք հրաշալի օրինակներ են (տես Սաղմ. 40.1-3, 55.4, Հովսան 1,2 գլուխները, Գ Թագ. 19.4-8):

Ընկճվածությունից չտառապելու համար մարդը պետք է պայքարի հուսախաբության դեմ: Եթե չգիտենք, թե ինչպես պայքարել, հուսախաբությունը կարող է տանել ընկճվածության: Ըստ ուսումնասիրությունների՝ հուսախաբությունն ընկճվածության առաջին փուլն է:

Պայքարի՛ր հուսախաբության դեմ

Երբեմն մենք հուսախաբության կիանդիպենք: Կյանքում ոչ ոքի չի վիճակվում ամեն բան ունենալ այնպես, ինչպես պատկերացնում է: Երբ մեր ծրագրերից որոշ բաներ չեն հաջողվում, առաջինը, ինչ զգում ենք, հուսախաբությունն է: Դա բնական է: Բայց պետք է իմանալ, թե ինչպես վարվել այդ զգացողության հետ, այլապես լուրջ հետևանքներ կունենանք: Մենք միշտ էլ հուսախաբություն կապրենք, բայց Հիսուսի մեջ կարող ենք վերականգնվել: Փիլիպեցիներին ուղղված թղթի 3.13-ում կարդում ենք Պողոս առաքյալի խոսքերը.

> «… բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում լինողներն եմ նկրտում»:

Պողոսն ասում է, որ իր ամենակարևոր նպատակը ետինը թողնելն ու առաջ ընթանալն է: Երբ հուսախաբվում ենք, հարկավոր է անմիջապես ոտքի կանգնել: Մենք պետք է թողնենք հուսահատության պատճառները և առաջանանք դեպի այն ամենը, ինչ Աստված ունի մեզ համար: Մենք ստանում ենք նոր տեսիլք, նպատակ, գաղափար, հեռանկար, մտածելակերպ և կենտրոնանում ենք դրանց վրա: ՈՐՈՇՈՒՄ ԵՆՔ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ:

Եսայի 43.18,19 խոսքերը հետևյալն են ասում.

> «Առաջինները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում, հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաև մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

Եսայի 42.9-ում ասվում է.

> «Առաջին բաներն ահա կատարվել են, և նորերը Ես եմ պատմում. դրանք դեռ չբխած՝ ձեզ իմացնում եմ»:

Վերոհիշյալ խոսքերից տեսնում ենք, որ Աստված ցանկանում է նոր բան անել մեր

կյանքում, բայց մենք ուզում ենք ամուր կառչել ինից: Ամուր կառչում ենք մեր կարծիքներից, խոսակցություններից: Կարծես մարդիկ ավելի շատ ցանկանում են խոսել իրենց հուսախաբությունների, քան ապագայի, երազանքների և տեսիլքների մասին:

Տիրոջ ողորմություններն ամեն օր նոր են: «…Նրա գթությունները չեն պակասում: Դրանք ամեն առավոտ նորանոր են…» (Երեմ. Ողբ. 3.22,23):

Ամեն օրը նոր սկիզբ է: Մենք պետք է մոռանանք երեկվա հուսախաբությունները և Աստծուն հնարավորություն տանք այսօր նոր բան անելու մեզ համար: Գուցե ասեք. «Ջո՛յս, ես շատ անգամներ հուսախաբվել եմ և վախենում եմ կրկին հուսալուց»: Սատանան ցանկանում է, որ մենք հենց այդ վիճակում լինենք՝ հույս չունենանք: Ինձ ծանոթ է այդ վիճակը, քանի որ ինքս այդ վիճակում եմ եղել շատ տարիներ առաջ, երբ ես ու Դեյվն ամուսնացանք: Այնքան շատ մարդիկ էին ինձ հետ վատ վերաբերվում, որ ես՝ լինելով վիրավորված, լքված, վախենում էի նույնիսկ հուսալուց, որ իրավիճակները երբևէ կփոխվեն:

Բայց Աստծո Խոսքը ուսումնասիրելու շնորհիվ գիտակցեցի, որ հուսախաբությունը

շատ դժբախտ վիճակ է: Իմ ամբողջ կյանքում կգերադասեի հուսալ և ոչինչ չստանալ, քան հավիտյան ապրել հուսախաբության զգացողությամբ: Հուսախաբությունը շատ թանկ արժե. այն արժե վաղվա ձեր բոլոր երազանքները և ուրախությունը:

Մենք Աստծուց խոստում ունենք, որ Իրեն հուսալով՝ երբեք չենք հուսախաբվի և չենք ամաչի (տե՛ս Հռոմ. 5.5): Սա չի նշանակում, որ երբեք չենք հուսախաբվի: Կարծում եմ՝ վերոհիշյալ խոսքը նշանակում է, որ չպետք է հուսախաբության մեջ ապրենք: Շարունակելով հուսալ Հիսուսին՝ մենք դրական արդյունքներ կունենանք:

Կոտրված սպասումներ

Կոտրված սպասումները հուսախաբության են տանում: Ամեն օր սպասումներ ենք ունենում տարբեր ոլորտներում: Օրինակ՝ գիշերը պառկում ենք բարի քուն ունենալու սպասումով, երբ հանկարծ հնչում է սխալ հեռախոսազանգը: Արթնանալուց հետո չենք կարողանում քնել: Գիշերվա մնացած մասն անհանգիստ շարժվում ու պտտվում ենք անկողնում և հաջորդ առավոտյան արթնանում

ենք հոգնած ու թուլացած: Սպասում ենք, որ օրն արևոտ լինի, բայց փոխարենն անձրևում է: Աշխատանքում առաջընթաց ենք սպասում, բայց չենք ստանում: Մարդկանցից նույնպես սպասումներ ունենք: Չենք հավատում, որ մեր ընկերները կբամբասեն մեզ, բայց երբեմն հայտնաբերում ենք, որ նրանք բամբասում են: Սպասում ենք, որ մեր ընկերները կհասկանան մեզ և կհոգան մեր կարիքների մասին, երբ գնանք նրանց մոտ, բայց միշտ չէ, որ նրանք դա անում են: Ինքներս մեզնից սպասում ենք բաներ, որոնք չենք իրագործում:

Ես կարծում եմ, որ մեզնից շատ ավելին ենք ակնկալում, քան կարող ենք, և հաճախ հուսախաբվում ենք: Շատ անգամներ վարվել եմ այնպես, ինչպես ինքս էլ չէի սպասում:

Աստծուց նույնպես սպասում ենք որոշ բաներ, որ Նրա ծրագրերը չեն:

Մեր կյանքը լի է սպասումներով, և դրանցից մի քանիսը կոտրված են: Երբ հուսախաբվում ենք, մեզնից է կախված, թե ինչպես կարձագանքենք: Ես հայտնաբերել եմ, որ եթե շատ երկար եմ մնում հուսախաբ վիճակում, սկսում եմ հուսահատություն զգալ: Հուսահատությունն ավելի լուրջ խնդիր է, քան հուսախաբությունը:

Հուսահատություն

Ըստ Վեբսթերի 1828թ. բառարանի՝ «հուսահատված» բառը մասամբ բացատրվում է «վհատված, զրկված վստահությունից կամ համարձակությունից», իսկ «հուսահատություն»-ը՝ «նախաձեռնությունից ետ պահելու կամ տարհամոզելու, վստահությունն ընկճելու գործողություն» կամ «գործողություն, որն ընկճում է վստահությունը և հույսը»: «Հուսալքել» բառն ունի մեկ այլ նշանակություն՝ փորձել խոչընդոտել:

Հուսահատությունը համարձակության ճիշտ հակառակն է: Երբ հուսահատվում ենք, կորցնում ենք համարձակությունը: Ես հավատում եմ, որ Աստված յուրաքանչյուր Իրեն հավատացողին համարձակություն է տվել, իսկ սատանան փորձում է դա գողանալ: Մնալ ուժեղ և համարձակ՝ սա է ցանկացած գործում հաջողություն ունենալու կանոններից մեկը: Հեսու 1.6-ում Աստված Հեսուին ասաց, որ նա կժառանգի Խոստացված երկիրը, բայց դրա համար նա պետք է մնար ուժեղ և համարձակ: Ես հավատում եմ, որ Աստված Հեսուին զգուշացնում էր, որ թշնամին կփորձի հուսահատեցնել իրեն: Մենք

պետք է տեղյակ լինենք սատանայի գործելակերպին, բայց և պատրաստ՝ հակառակվելու դրան (տես Ա Պետր. 5. 9):

Առակաց 13.12-ում ասվում է. «Ուշացած հույսը սիրտը կհիվանդացնի....»: Երբ ինչ-որ բանից հուսահատվում ենք, այլևս հույս չենք փայփայում: Չենք կարող միևնույն ժամանակ լինել և՛ հուսահատված, և՛ հույսով լի: Երբ հույսն արթնանում է, հուսահատությունը հեռանում է: Երբ պայքարում ենք ճիշտ դիրք ունենալու համար, հնարավոր է, տատանվենք հույսի և հուսահատության միջև: Սուրբ Հոգին առաջնորդում է հույսով, իսկ սատանան հարձակվում է հուսահատությամբ: Հավատացյալի համար շատ կարևոր է Սուրբ Հոգու զորությամբ հաղթության հասնել: Եվ եթե հաղթության չի հասնում, վիճակն ավելի է վատանում: Վաղանցիկ հուսահատությունը, հնարավոր է, կործանարար հետևանք չունենա, բայց շարունակական հուսահատությունը կհանգեցնի ընկճվածության:

Հաղթության հասնելու և հուսալի դիրք պահպանելու համար մեր միտքը պետք է նորոգվի Աստծո խոստումներով: Հաստատո՛ւն մնա հավատքի մեջ՝ հավատալով, որ Աստված կանի այն, ինչ Իր Խոսքն է ասում:

Ընկճվածության մեկնարկները

Հավատացյալի համար կարևոր է ավելի շուտ հասնել հաղթանակի, քանի որ ընկճված վիճակը կարող է տանել մեկ այլ մակարդակի և խորության: Եթե ընկճվածություն կա, ուրեմն կան երկու ավելի խորը մակարդակներ՝ հիասթափությունը և հուսահատությունը: Խորապես չընկճված մարդը չի մտածի կամ չի դիմի ինքնասպանության, բայց հուսահատության մեջ գտնվող մարդը կմտածի ու կկատարի այդ քայլը: Ոչ այնքան ընկճված մարդիկ հնարավոր է տխրեն և չցանկանան խոսել կամ որևէ տեղ գնալ: Նրանք ցանկանում են, որ իրենց հանգիստ թողնեն: Նրանց մտքերը բացասական են, իսկ վիճակը՝ նյարդային: Այդպիսի մարդիկ դեռևս կարող են հույսի նշույլ ունենալ: Սա այն հույսն է, որն ի վերջո օգնում է դուրս գալ ընկճվածությունից: Իսկ հիասթափված մարդը նույնատիպ ախտանիշներ ունի, բայց դրանք ավելի խորն են: Նա տրտում է (տես Սաղմ. 37.24, 42.5), մտքով՝ վհատված, հոգով՝ անկարող, կորցրել է իր համարձակությունը և ընկղմվում է անհուսության մեջ:

Նույնպիսի ախտանիշներ ունի հուսահատության մեջ գտնվող մարդը, բայց նա ավե-

լի խորը վիճակում է, քան հիասթափված մարդը: Ու. Է. Վայնի Նոր կտակարանի բացատրական բառարանը «հուսահատված» բառի հունարեն տարբերակը թարգմանում է՝ «բացարձակապես անելանելի վիճակ», «ամբողջովին կորստի մեջ, առանց միջոցի»: Հուսահատությունը տարբերվում է հիասթափությունից: Հուսահատության մեջ հույսի կատարյալ բացակայություն է նկատվում, իսկ հիասթափության մեջ՝ ոչ: Հիասթափված մարդիկ չեն կորցրել վերջին հույսը: Հիասթափությանը հաջորդում է եռանդի կորուստը կամ գործունեության դադարեցումը, իսկ հուսահատությունը երբեմն կապակցված է բռնի գործողությունների, նաև զայրույթի հետ: Ինքնասպանության՝ սեփական անձի հանդեպ բռնի գործողության դիմող մարդիկ խորը հուսահատության մեջ են: Սատանայի գործելակերպն այն է, որ կոտրված սպասումներ ունեցող կամ հուսախաբված մարդկանց այդ վիճակին հասցնի:

Խուսափելով հուսահատության ճանապարհին ընտրելուց՝ շատ կարևոր է անմիջապես պայքարել ընկճվածության առաջին փուլի դեմ:

2

ՅՆԾՈՒԹՅԱՆ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ կեսգիշերին Պողոսն ու Շիղան աղոթք անելով օրհնում էին Աստծուն... Եվ հանկարծակի մեծ շարժ եղավ, մինչև որ բանտի հիմքերն էլ շարժվում էին, և իսկույն բոլոր դռները բացվեցին, և ամենքի կապանքներն արձակվեցին»:

Գործք 16.25, 26

2

Ծնծուղության զորությունը

Ամբողջ Աստվածաշնչում Աստված Իր ժողովրդին ուսուցանում է լցվել ուրախությամբ և ցնծությամբ: Փիլիպեցիներին ուղղված թղթի 4.4-ում ասվում է.

> «Ուրախ եղեք Տիրոջով ամեն ժամանակ, դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք»:

Աստված, սովորաբար, երկու անգամ է կրկնում այն, ինչ ուզում է, որ մենք անենք: Այս խոսքում Պողոսը փիլիպեցիներին երկու անգամ ասում է՝ ուրախ եղեք: Մենք նույնպես պետք է ուշադրություն դարձնենք այս խոսքերին: Պողոս առաքյալը գիտեր ցնծության զորությունը: Երբ նա Փիլիպպեի բանտում էր, տեսեք թե ինչ տեղի ունեցավ.

> «Եվ կեսգիշերին Պողոսն ու Շիղան աղոթք անելով օրհնում էին Աստծուն… Եվ հանկարծակի մեծ շարժ եղավ, մինչև որ

բանտի հիմքերն էլ շարժվում էին, և իսկույն բոլոր դռները բացվեցին, և ամենքի կապանքներն արձակվեցին»:

Գործք 16.25, 26

Այն նույն զորությունը, որ բացեց դռները և կոտրեց Պողոսի, Շիղայի և նրանց հետ գտնվող բանտարկյալների երկաթե շղթաները, այսօր առկա է այն մարդկանց համար, ովքեր բանտարկված ու շղթայված են ընկճվածությամբ: Շատ անգամներ մարդիկ լսում են «ցնծալ» բառը և մտածում. «Գեղեցիկ է հնչում, բայց ինչպե՞ս դա անել»: Նրանք կցանկանային ցնծալ, բայց չգիտեն՝ ինչպես:

Պողոսն ու Շիղան, որոնց ծեծել, բանտ էին նետել և ոտքերը կոճղերի մեջ էին դրել, ցնծում էին՝ փառաբանելով Աստծուն: Մենք հաճախ չենք գիտակցում, որ «ցնծալ»-ը կարող է արձակել այսպիսի մեծ զորություն: Դա կարող է լինել այնքան պարզ, որքան ժպտալն ու ծիծաղելը, հրաշալի ժամանակ անցկացնելը: Ցնծալը հաճախ կանխում է խնդիրը:

Մի անգամ, երբ պատրաստվում էի խոսել ընկճվածության մասին, Աստված ասաց. «Ընկճված մարդիկ գալիս են տարբեր

խորհրդատվությունների և տարբեր դեղորայքներ են ընդունում: Սակայն չեն հասկանում, որ եթե միայն ժպտան, երգեն կամ ծիծաղեն, ընկճվածությունը չի կարող մնալ իրենց մեջ»: Այսպիսով, եթե նրանք անմիջապես արձագանքեն՝ ընկճվածությունը կհեռանա:

Սուրբ գիրքը պարզ ուսուցանում է այս ճշմարտությունը, թեև նախկինում ուշադրություն չենք դարձրել «ցնծությանը» վերաբերող ուսուցումներին: Ուրախությունը՝ Սուրբ Հոգու պտուղն է:

> «Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն: Այսպիսիների դեմ օրենք չկա»:
>
> Գաղատացիների 5.22,23

Եթե փրկված ենք, Աստծո հետ անձնական փոխհարաբերություն ունենք, ապա Սուրբ Հոգին բնակվում է մեր մեջ (տես Հովի. 14.16,17, Ա Կորնթ. 12.3): Եթե ուրախությունը Սուրբ Հոգու պտուղն է, և Աստծո Հոգին մեր մեջ է, ապա ուրախությունը մեր մեջ է: Մենք չենք փորձում ուրախությունը

ձեռք բերել կամ կեղծել. ուրախությունն արդեն իսկ մեր մեջ է՝ ինչպես սիրելու ընդունակությունը և Սուրբ Հոգու մյուս պտուղները: Շատ կարևոր է հասկանալ, որ մենք, որպես հավատացյալներ, չպետք է փորձենք ուրախություն ձեռք բերել. մենք արդեն իսկ դա ունենք: Պարզապես, այդ ուրախությունն արտահայտել պետք է սովորենք:

ԽՍՏՂՈՂ ՑՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ

> «Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը և այն պաշտոնը, որ Տեր Հիսուսից առա, որ Աստծո շնորհաց Ավետարանը վկայեմ»:
>
> Գործք 20.24

Ըստ Սթրոնգի բառարանի՝ հունարեն բառի արմատը, որը թարգմանված է «ուրախություն», այս տարբերակում նշանակում է «զվարճություն», այսինքն՝ «խաղաղ զվարճություն»: «Ուրախություն» բառի եբրայերեն նշանակությունը «ցնծալ», «ուրախանալ», «միաբանվել» բառերն են: Նեեմիայի 8.10-ում գրված է. «…Տիրոջ ուրախությունը

ձեր զորությունն է», «ուրախություն» բառի նշանակություններից մեկը «միաբանվելն» է: Որպեսզի Տիրոջ ուրախությունը լինի մեր զորությունը, պետք է միաբանվենք Աստծո հետ: Աստծո հետ միաբանվելը մեր կյանքի ուրախության հիմքն է: Մեկ այլ եբրայերեն բառ, որ թարգմանված է «ուրախություն», կարող է ունենալ «պտտվել» իմաստը: Մենք կարող ենք «Տիրոջ ուրախությունը» մեկնաբանել հենց այդ նշանակությամբ: Բայց սա չի նշանակում, որ պետք է օրը 24 ժամ ամենուրեք վեր ու վար ցատկենք և պտտվենք մեր ծանոթների շուրջը:

Հաճախ, երբ մարդիկ Խոսքը լսում և ճանաչում են որպես ճշմարտություն, ցանկանում են դա կիրառել իրենց ուժերով՝ առանց թույլ տալու, որ Աստված գործի որպես աղոթքի զորության արդյունք: Աստծո ուրախությունը ֆիզիկական ձևով արտահայտել՝ չի նշանակում մարմնով գործել: Երբ ուրախություն չենք զգում, պետք է միջոցներ ձեռնարկենք՝ դա մեր ներսից արձակելու, քանի դեռ չենք ընկճվել: Երբեմն պետք է մարմնով ցնծալ, անկախ այն բանից՝ ուրախություն զգում ենք, թե՝ ոչ: Դա նման է պոմպի. բռնա-

կը մի քանի անգամ վեր ու վար ենք շարժում, մինչև ջուրն սկսում է հոսել:

Ես հիշում եմ, որ իմ տատն ու պապը հին պոմպ ունեին: Այնտեղ, որտեղ նրանք ապրում էին, հոսող ջուր չկար: Երբ երեխա էի, տաշտակի մոտ կանգնած՝ պոմպի բռնակը վեր ու վար էի շարժում և ջուր մատակարարում: Սկզբում այնպիսի տպավորություն էր, կարծես իմ գործողություններն անիմաստ էին՝ ես միայն օդն էի հանում: Երբ շարունակում էի բռնակը շարժել, այդ գործողությունը հետզհետե դժվարանում էր, և դա նշան էր, որ ջուրը շուտով կհոսի: Նույնը վերաբերում է ուրախությանը: Մենք մեր հոգում ջրհոր ունենք: Ծիծաղելը, երգելը, ժպտալը և այլ ֆիզիկական գործողություններ նման են պոմպի բռնակը շարժելուն: Սկզբում ֆիզիկական միջոցները կարծես որևէ բան չեն անում: Բայց հետո, երբ դա նույնիսկ ավելի է դժվարանում, ուրախության «գետ» է հոսում, եթե չենք հուսահատվում:

Իմ կարծիքով՝ ուրախությունն այն չէ, որ ամենուրեք մշտապես սառած ժպիտը դեմքներիս լինի: Մենք պետք է իմաստությամբ գործենք: Ես առնչվել եմ ուրախությամբ լե-

ցուն քրիստոնյաների հետ, որոնք իրենց անտարբերությամբ վիրավորել են իմ զգացմունքները: Հիշում եմ, երբ ընկերներիցս մեկին պատմեցի մի դեպքի մասին, որը չափազանց վիրավորել էր զգացմունքներս, ի պատասխան՝ նա միայն բարձրաձայն ծիծաղեց: Կարծես ապտակեց ինձ: Եթե նա, ինչպես հարկն է, մխիթարեր ինձ՝ ցուցաբերելով ըմբռնում և հետաքրքրություն, իր ծառայությունն իմ կյանքում կարող էր իրական ուրախություն արձակել: Բայց նրա կեղծ արձագանքը վիրավորեց և ավելի բարդացրեց վիճակս: Երբ սկզբում նրա մոտ գնացի, տխուր էի, իսկ հետո ընկճվեցի:

Մենք միշտ պետք է իմաստությամբ վարվենք: Պահեր են լինում, երբ ուրախությունից ցնծում ենք: Հնարավոր է՝ մի ոգևորող բան է տեղի ունեցել, և հազիվ ենք զսպում մեզ: Եթե ռեստորանում կամ նպարեղենի խանութում ենք, լավ կլինի, որ հաշվի առնենք մեզ շրջապատող մարդկանց կարծիքը: Որպես քրիստոնյաներ՝ մենք չպետք է անենք այն, ինչը կստիպի մարդկանց՝ մեր մասին մտածել որպես մոլեռանդների: Ռեստորանում պահեր են եղել, երբ ասել եմ. «Ցանկա-

նում եմ բարձրանալ սեղանին և աղաղակել՝ փա՛ռք Աստծուն»: Երբեմն ձեր ներքին վիճակն է մղում դրան: Սակայն եթե ռեստորանում, նպարեղենի խանութում կամ հասարակական մեկ այլ վայրում եք, պետք է իմաստությամբ վարվեք:

Մենք կարող ենք լիաթոք ցնծալ, բայց հաճախ ցնծում ենք՝ լինելով պարզապես ուրախ, երջանիկ, խաղաղ վիճակում: Ինչպես Տերը ցույց տվեց, ժպտալ՝ նշանակում է ապրել խաղաղ զվարճությամբ:

3

ԺՊՏԱԼԸ ԼՈՒՐՋ ԳՈՐԾ Է

«…առավոտյան ցնծություն է գալիս»:

Սաղմոս 30.5

3

ԺՊՏԱԼԸ ԼՈՒՐՋ ԳՈՐԾ Է

Ես բավական լուրջ, սառնասիրտ լինելու հակվածություն ունեմ: Բայց սովորեցի, որ ժպտալու հանդեպ նույնպես պետք է լուրջ լինեմ: Ես մեծացել եմ վատ պայմաններում և դժվարություններ եմ ունեցել իմ կյանքում: Մանկություն չեմ ունեցել, ինձ զրկել են իմ երիտասարդության ուրախությունից: Ապրում էի չափահաս մարդու պես, քանի որ ամեն բան լուրջ էր ընթանում: Մտածում էի, որ եթե լուրջ լինեմ, կարող եմ պաշտպանել ինձ: Այսպիսի նախադրյալով դուք չեք կարող մեծանալ որպես զվարթ և ծիծաղկոտ անձնավորություն: Ես լուրջ դիրք էի գրավել, որը մարդկանց կողմից կարող էր չհասկացվել:

Մի անգամ, երբ իմ օգնականներից մեկին ասացի, որ պետք է խոսեմ իր հետ, նա մտածել էր, թե ինչ-որ բանի համար նկատողություն եմ անելու իրեն: Բայց այն ամենը, ինչ ցանկանում էի ասել՝ ընդամենը գալիք ժողո-

վի պատրաստության վերաբերյալ էր: Այնքան լուրջ էի խոսել նրա հետ, որ կարծել էր, թե սխալ է գործել: Ես դիմեցի Տիրոջը՝ խնդրելով ցույց տալ ինձ, թե ինչպես ազատվեմ այդ լրջությունից: Աստված ինձ ասաց, որ պետք է ուրախություն արտահայտեմ: Նա գիտեր, որ ուրախությունն իմ սրտում է, բայց ցանկանում էր, որ դա արտահայտվեր, որպեսզի բոլորը տեսնեին և օգտվեին դրանից: Առավոտյան, երբ լոգանք էի ընդունում, Նա ասաց. «Ես ցանկանում եմ, որ ժպտաս, երբ խոսում ես Ինձ հետ»: Ես չէի ցանկանում ծիծաղել: Առավոտյան ժամը վեցին, երբ արթնացա, դեռ թմրած էի, բայց սկսեցի ժպտալ: Լոգարանում, առանց պատճառի, ժպտում էի և մտածում. «Ուրախ եմ, որ ոչ ոք չի տեսնում ինձ»:

Սաղմոս 30.5-ում ասվում է. «... առավոտյան ուրախություն է գալիս»: Երբ առավոտյան բացում ենք մեր աչքերը, ուրախությունը մեզ հետ է: Մենք չենք կարող ուրախություն զգալ՝ մինչև մտածված կերպով դա չարտահայտենք: Սկզբում որոշումներն են գալիս, այնուհետև՝ զգացմունքները: Երբ ուրախությունը բացահայտ է մեր կյանքում, դա թեթևացնում է նաև մեզ շրջապատող մարդ-

կանց կյանքը: Բայց երբ դա միայն մեր մեջ է, կարող ենք լուրջ մթնոլորտ ստեղծել, որը ճնշվածության պատճառ է դառնում:

Մի գիշեր, երբ ես ու Դեյվը զրուցում էինք, նա ասաց. «Ես զգում եմ, որ մեր ընտանիքում լրջությունը շատ է»: Ես սկսեցի մտածել. «Տե՛ր, իմ կյանքում չկա ոչ մի սխալ բան, որ չիմանամ: Ես միշտ իմ ժամանակն անցկացնում եմ՝ աղոթելով, ուսումնասիրելով Խոսքը, սիրելով Քեզ և խնամք տանելով ընտանիքիս համար: Այդ ի՞նչ է, որ Դեյվն զգում է»:

Տերն ասաց, որ կարող ենք մեր սրտում լուրջ պատճառներ ունենալ, բայց լուրջ տեսք չունենալ: Սկսեցի գիտակցել, որ ես, որպես տանտիրուհի, ընտանիքում կարող էի ջերմ մթնոլորտ ստեղծել: Ուրախությունը լույսից է, իսկ տխրությունը՝ խավարից: Այս երկուսը չեն կարող միասին լինել: Եթե լույսով լի տուն եմ ցանկանում, «լուսավորման» կարիք ունեմ: Գիտակցեցի, որ պետք է ավելի շատ ժպտամ իմ ընտանիքի անդամներին: Երեխաներին ոչ միայն դիտողություններ անեմ, այլև ժպտամ: Մինչ ցուցումներ տալը՝ հաճելի տեսք ունենամ: Ես պետք է ժամանակ տրամադրեմ՝ զվարճանալու նրանց հետ:

Ես հավատում եմ, որ մեր ընտանիքները պետք է երջանիկ լինեն: Մենք պետք է Տիրոջ ուրախությամբ գործենք: Եթե կինն ուրախ է, նրա ամուսինն ուրախությամբ կգա տուն: Յուրաքանչյուր ոք ցանկանում է ուրախ միջավայրում լինել: Եթե ամուսինը փնթփնթացող ղեկավար և դժգոհող աշխատակիցներ ունի, առավել ևս չի ցանկանա տուն գալ՝ իմանալով, որ տանը նույն մթնոլորտն է տիրում:

Անշուշտ, ամուսինն ու երեխաներն էլ ընտանիքը երջանիկ դարձնելու իրենց բաժինն ունեն: Ուրախությունը վարակիչ է: Սկզբում մեկն է բռնկվում դրանով, հետո՝ մյուսը, մինչև կտեսնեք, որ բոլորը երջանիկ են:

ՅԱՇՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՈՒՄ Է ՁԵՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ

Տարբեր ոլորտներում Աստծո հետ քայլելիս հասնում ենք որոշակի կետի և տեսնում, որ կանգ ենք առել: Գիտենք, որ առջևում ավելի շատ բան կա, բայց զգում ենք, որ մի բան արգելում է առաջ գնալ: Դեյվը և ես բարգավաճման ոլորտում հասանք այդ կետին: Մենք ոչինչ չունեինք, բայց Աստված օրհնեց մեզ: Գիտեինք, որ Աստված մեզ

համար ավելին ունի: Աստված ցանկանում է ավելին օրհնել: Նա ցանկանում է, որ ապրենք գեղեցիկ բնակարաններում, վարենք գեղեցիկ ավտոմեքենաներ և ունենանք գեղեցիկ հագուստներ: Մենք Նրա զավակներն ենք, և Նա ցանկանում է էլ ավելի խնամք տանել մեզ համար:

Կիրառելով աստվածաշնչյան սկզբունքները՝ բարգավաճման հիմք ենք դնում: Երբ մենք օրհնում ու տալիս ենք, քանի որ սիրում ենք Տիրոջը, անպայման կստանանք (տե՛ս Ղուկ. 6.38): Երբ տասանորդ ենք տալիս, Աստված օրհնում է (տե՛ս Մաղաք. 3.10): Նույն գլխի 11-րդ խոսքում ասվում է, որ Աստված մեզ համար կկշտամբի ուտողին, որ մեր արդյունքը չապականի:

Դեյվը և ես գործնականում տեսել ենք բարգավաճման այն տեսակը, որն առաջանում է նվիրաբերությունից և տասանորդից: Քանի որ սրտումս զգում էի, որ ժամանակն է անցնելու մեկ այլ մակարդակի, Տիրոջը խնդրեցի ցույց տալ, թե ինչն է արգելք հանդիսանում: Աստված խոսեց ինձ հետ, որ ուրախությունը օրհնություն ընդունելու կարևոր մասն է: Ուրախություն չարտահայ-

տելը խոչընդոտում է բարգավաճմանը: Եթե Տիրոջ ուրախությունը մեր մեջ է, և մենք չենք ժպտում, մեր աչքերը պայծառություն չեն արտահայտում, ապա բարկացած տեսք կունենանք: Շատ կարևոր է, թե ինչպես են շրջապատի մարդիկ տեսնում մեզ: Սովորաբար, մարդիկ չեն ցանկանում որևէ բանով օրինել կամ օգնել ինչ-որ մեկին, քանի որ նա շատ լուրջ տեսք ունի և գուցե վիրավորվի: Մեզնից յուրաքանչյուրը գիտի՝ ինչպես ժպտալ: Դա ամենամեծ պարգևներից է, որ Աստված շնորհել է մեզ: Ժպիտը մարդուն գեղեցկացնում է: Ես երբեք չեմ մտածել, որ ժպիտն այսքան լուրջ հարց է, բայց Աստված մի քանի ամիս շարունակ սովորեցնում էր ինձ: Շատ անգամ, երբ Աստված մեզ ինչ-որ բան է ասում, և մենք ուշադրություն չենք դարձնում, անգիտակցաբար ինքներս մեզ փորձանքի մեջ ենք գցում: Ուրախության արտահայտումը ժպիտի միջոցով՝ մեր կյանքում օրհնություններ կբերի և կցուցադրի Հիսուսի լույսը:

Աստված Իր ժողովրդին ասում էր, որ ցնծան թշնամուն դեմառդեմ դուրս գալիս, երբ գնում են պատերազմի: Նա ասում էր, որ

ցնծան՝ բարձրաձայն երգելով և փառաբանելով (տե՛ս Բ Մնաց. 20): Աստվածաշնչում ասվում է, որ երբ անցնում ենք դժվարին ժամանակների, փորձությունների միջով, դա «ուրախություն համարենք» (տե՛ս Հակոբ. 1.1-5):

Շատերն իրապես չեն հասկանում, թե ուրախության արտահայտումն ինչպես կփոխի իրավիճակը: Աստծո ուրախությունը կհալածի այն իրավիճակները, որոնք աստվածային չեն, այլ՝ սատանայից են: Սատանան չի կարող դադարեցնել Աստծո ուրախությունը: Եթե գործենք այդ ուրախությամբ, սատանան և դժվար իրավիճակները կհեռանան մեր ճանապարհից:

4

ԵՐԳԵ՛Ք ԵՎ ԱՂԱՂԱԿԵ՛Ք ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ

«Ուրախացե՛ք Տիրոջով և ցնծացե՛ք, ո՛վ արդարներ, և ցնծությամբ աղաղակե՛ք ամենքդ, որ ուղիղ եք սրտով»։

Սաղմոս 32.11

4

ԵՐԳԵ՛Ք և ՍՂՍՂԿԵ՛Ք ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ

«Քրիստոսի Խոսքը բնակվի՛ ձեր մեջ առատապես, ամեն իմաստությունով իրար սովորեցրե՛ք և խրատե՛ք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքներով օրհներգե՛ք Տիրոջը ձեր սրտերում: Եվ ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, Տեր Հիսուսի անունով արեք՝ գոհություն տալով Աստծուն և Հորը՝ Նրա ձեռքով»:

Կողոսացիների 3.16,17

ԵՐԳԵ՛Ք ՏԻՐՈՋԸ

Մենք արդեն տեսանք ուրախության և ցնծության զորությունը՝ ընկճվածությունը հաղթահարելու համար: Վերոհիշյալ խոսքում Պողոս առաքյալն ասում է, որ սաղմոսներ, շարականներ և հոգևոր երգեր երգելով՝ պետք է ուրախություն և ցնծություն արտահայտենք Տիրոջը:

Եփեսացիներին ուղղված թղթի 5.19,20 խոսքերում Պողոսը շարունակում է ուսուցանել. «Խոսելով ձեր մեջ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով՝ երգեք ու սաղմոս ասեք ձեր սրտերում Տիրոջը: Ամեն ժամանակ ամեն բանի համար գոհացեք Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով»: Եկեք ուրախությամբ անենք այն, ինչ Խոսքն ասում է մեզ:

ԵՐԳԵ՛Ք և ՍՊԱՍԱՎԵ՛Ք ԱՅԱՍՏԱՂՐՈՒԹ

«Դու՛ ես իմ ապաստանը. նեղությունից կպահես ինձ, փրկության երգերով կպատես ինձ»:

Սաղմոս 32.7

«Ուրախացեք Տիրոջով և ցնծացեք, ո՛վ արդարներ, և ցնծությամբ աղաղակեք ամենքդ, որ ուղիղ եք սրտով»:

Սաղմոս 32.11

Սաղմոս 5.11-ում Դավիթն ասում է Տիրոջը.

«Բայց թո՛ղ ուրախ լինեն բոլոր Քեզ հուսացողները, թո՛ղ հավիտյան ցնծան, որով-

հետև Դու պահպանում ես նրանց, և թո՛ղ Քեզանով զվարճանան Քո անունը սիրողները»:

Մի քանի տարի առաջ «Աղաղակ» լվացքատան արտադրանքը հեռուստատեսությամբ գովազդում էին հետևյալ կարգախոսով. «Դո՛ւրս հանեք բծերը»: Այս խոսքերն ինձ դրդեցին «Աղաղակեք՝ դո՛ւրս» վերնագրով քարոզ պատրաստելու: Այդ քարոզում հավատացյալներին քաջալերում էի, որ երբ սատանան մոտենում է իրենց՝ խանգարելու և ձանձրացնելու, նրանք պետք է աղաղակեն՝ դո՛ւրս իմ կյանքից: Ես հաճախ էի լացում, բայց երբեք չէի աղաղակում: Դրանց միջև մեծ տարբերություն կա: Աստված խոսեց ինձ հետ. «Ջո՛յս, դու կա՛մ պետք է սովորես աղաղակել, կա՛մ վերջ տաս լացիդ: Ո՞րն ես ընտրում»:

Այսպիսով, երբ իմ կյանքում որոշ բաներ սկսեցին սխալ ընթանալ, ճչալու կամ լաց լինելու փոխարեն սովորեցի աղաղակել՝ փառաբանելով և երկրպագելով Աստծուն: Դուք պետք է փորձեք աղաղակել, քանի որ դա պարտության է մատնում զայրույթը և կործանմանը:

Դավթի նման ես էլ իմ անձը շրջապատում եմ երգով և աղաղակով: Նկատել եմ, որ երբ այդպես եմ անում, երգն ու աղաղակը

գործում են որպես պարիսպ՝ տարբեր կողմերից շրջապատելով ինձ:

Երգելն ու աղաղակելը կարող են նաև պարիսպներ և ամրոցներ կործանել: Հեսու 6.20-ում կարդում ենք հետևյալը. «Եվ ժողովուրդն աղաղակեց փողերը հնչելիս, և երբ որ ժողովուրդը փողերի ձայնը լսեց և բարձրաձայն աղաղակեց, պարիսպները վայր ընկան, և ժողովուրդը վեր ելավ քաղաքը՝ ամեն մեկը ուղիղ իր առաջ, և քաղաքն առավ»: Սա չի նշանակում, որ մենք պետք է վազենք ամբողջ քաղաքով և մեր թոքերի ամբողջ կարողությամբ աղաղակենք: Բայց տանը չկա որևէ արգելք՝ առավոտյան երգելու և փառաբանելու Տեր Աստծուն:

Մի ժամանակ սիրում էի հանգստություն, հատկապես՝ առավոտյան, երբ ցանկանում էի մտածել: Բայց արդյունավետ մտածելու փոխարեն մեծ անհանգստությամբ էի լցվում այն հարցերի վերաբերյալ, որոնց լուծումը չէի կարողանում պատկերացնել: Ես աղոթելու և Աստծուն վստահելու կարիք էի զգում: Առավոտյան արթնանալուց հինգ կամ տասը րոպե անց ամուսինս սկսում էր երգել: Նա բավականություն էր ստանում նաև երաժշտություն լսելուց, բայց ես դժգոհում էի՝

ասելով, որ հանգիստ եմ ցանկանում: Աստված ինձ հանդիմանեց. «Երաժշտություն չես լսում»: Դրանից հետո սովորեցի երաժշտություն լսել: Ես պետք է զարգացնեի այդ սովորությունը, և դա անում էի հնազանդությամբ, մինչդեռ սովոր էի հանգստության:

Ես նկատի չունեմ, որ մեզ հանգստություն պետք չէ. մենք ունենք դրա կարիքը: Աստված մեզ հետ խոսում է, երբ հանգիստ ենք, և դրանք թանկագին պահեր են: Բայց ես անհավասարակշիռ վիճակում էի: Ես կարիք ունեի օրս երջանիկ սկսելու, և երաժշտությունն ինձ օգնեց:

Դավիթը նույնիսկ պատերազմում էր ընկճվածության դեմ: Նա ասում էր. «Երգե՛ք և աղաղակե՛ք ուրախությամբ»: Ահա թե ինչու նրա սաղմոսներն Աստծուն փառաբանող երգեր են: Երբ տրտմում եմ, բարձրաձայն սաղմոսներ եմ կարդում՝ հավատալով, որ Աստծո խոստումները կիրագործվեն: Քանի դեռ չենք կարդացել, չենք դավանել և չենք իրագործել դրանք, կարող ենք չարությամբ լցվել: Ահա թե ինչ էր ակնարկում Պողոսը, երբ Կորնթոսի եկեղեցուն գրում էր.

> «Որովհետև տակավին մարմնավոր եք, որովհետև տակավին նախանձ, կռիվ և

բաժանումներ կան ձեզանում. չէ՞ որ մարմնավոր եք և մարդկորեն եք վարվում»:

Ա Կորնթացիների 3.3

Այլ կերպ ասած՝ նրանք չէին անում այն, ինչ Աստծո Խոսքն էր ասում, այլ անում էին այն, ինչ զգում էին: Պողոսն ասում էր, որ այսպես վարվելով՝ նրանք գործում են ոչ թե Աստծո Հոգով, այլ իրենց մարմնով: Գաղատացիներին ուղղված թղթի 6.8-ում նա զգուշացնում է. «…իր մարմնի մեջ սերմողը մարմնից ապականություն կհնձի, և Հոգու մեջ սերմողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի»: Մենք պետք է սովորենք անել այն, ինչ Դավիթն էր անում՝ խոսենք մեր շնչի, մեր անձի հետ: Հակառակ դեպքում, շունչն իշխանություն կվերցնի մեզ վրա և կտանի քայքայման, կործանման ու ոչնչացման:

Սպասելով սպասե՛ք Տիրոջը

«Ինչո՞ւ ես տրտում, ո՛վ իմ անձ, և շփոթված ես ինձանում: Աստծո՛ւն հուսա, որովհետև էլ կգոհանամ Նրանից, որ իմ երեսի փրկությունն է»:

Սաղմոս 42.5

Ձեր հոգին երբևէ տրտմե՞լ է: Իմ հոգին երբեմն տրտմում է: Երբ Դավիթն զգում էր, որ իր շունչը տրտնջում է և անհանգիստ է, սպասելով սպասում էր Տիրոջը: Նա փառաբանում էր Նրան՝ իր Աստծուն և Օգնականին: Դավթի համար սա պետք է կարևոր հարց լիներ, քանի որ նույն Սաղմոսի 11-րդ խոսքում նա կրկնում է միևնույն խոսքերը. «Ինչո՛ւ ես տրտում, ո՛վ իմ անձ: Ինչո՛ւ ես շփոթված ինձանում: Աստծո՛ւն հուսա, որովհետև է՛լ կգոհանամ Նրանից, որ իմ երեսի փրկությունն ու իմ Աստվածն է»:

Դավիթը գիտեր, որ տագնապի ժամանակ իր դեմքն ընկճվածություն էր արտահայտում: Ահա թե ինչու էր խոսում իր անձի, շնչի (զգացմունքների, կամքի և մտքի) հետ, զորացնում և քաջալերում իրեն Աստծով (տե՛ս Ա Թագ. 30.6): Երբ ընկճված ենք, պետք է սպասելով սպասենք Տիրոջը, փառաբանենք Նրան՝ մեր Աստծուն և Օգնականին, որ Նրա մեջ է մեր զորությունն ու մխիթարությունը:

Մենք, որ Աստծո արդարներ ենք Հիսուս Քրիստոսով, մենք, որ ապաստան ենք գտնում Նրա մեջ և վստահում ենք Նրան,

կարող ենք երգել և աղաղակել ուրախությամբ: Աստված ծածկում և պաշտպանում է մեզ: Նա մեր պատերազմները պատերազմում է, երբ փառաբանում ենք Նրան (տե՛ս Բ Մնաց. 20.17-21):

5

ԱՆՄԻՋԱՊԵ՛Ս ՀԱԿԱՌԱԿՎԵՔ ՍԱՏԱՆԱՅԻՆ

«Որին հակառա՛կ կանգնեք՝ հավատքով հաստատուած…»։

Ա Պետրոս 5.9

5

Անմիջապե՛ս հակառակվեք աստանային

Ընկճվածության շատ պատճառներ կան, որոնց միակ աղբյուրը սատանան է: Նա ցանկանում է մեզ ճնշված պահել: Նրա ամենամեծ միջոցներից մեկը, որ ստիպում է ինքներս մեզնից դժգոհ լինել, դատապարտությունն է: Սատանան դա օգտագործում է՝ մեր ուրախությունը գողանալու համար: Նա գիտի, որ «Տիրոջ ուրախությունը»՝ «մեր զորությունը», իր դեմ է (տես Նեեմիա 8.10): Նա ցանկանում է, որ տկար և անկարող լինենք որևէ բան անելու՝ հաշտվելով իր հարձակումների հետ:

Ֆիզիկական թերությունները, նյութափոխանակության խանգարումը, գերհոգնածությունը և հյուծվածությունը կարող են ընկճվածության պատճառ հանդիսանալ: Եթե մարմինը հյուծված է սթրեսի կամ

հանգստության պակասի պատճառով, ապա իմաստություն գործածելով, անհրաժեշտ հանգիստ և սնունդ ստանալով՝ մարդը կարող է վերականգնվել: Իսկ եթե ընկճվածության պատճառը նյութափոխանակությունը և ֆիզիոլոգիական խանգարումներն են, խոհեմ կլինի դիմել բժշկական օգնության: Երաժշտություն լսելը, երգելը, աղաղակելը չեն ամրապնդում այն մարդկանց, ովքեր անկման վիճակում են աշխատանքի գերլարվածության պատճառով, քանի որ նրանց մարմինը չի գործում, ինչպես հարկն է, ըստ իրենց հորմոնների կամ նյութափոխանակության: Պետք է ուշադրություն դարձնել ֆիզիկական կարիքներին: Ընկճվածությունը կարող է առաջանալ ֆիզիկական, մտավոր, զգացմունքային կամ հոգևոր տկարությունների պատճառով:

Դավիթ թագավորն ընկճված էր, քանի որ իր կյանքում չխոստովանած մեղք ուներ (տե՛ս Սաղմ. 51): Հովնանն ընկճված էր, քանի որ փախչում էր Աստծո կանչից և ապրում անհնազանդության մեջ (տե՛ս Հովնան 1,2): Եղիան ընկճված էր, քանի որ հոգնած էր. Տիրոջ հրեշտակը կերակրում էր նրան

հրաշալի սննդով և թողնում էր, որ քնի (տես Գ Թագ. 19.5-8):

Չենք կարող բոլոր պատճառները մեկտեղել՝ տալով միայն մեկ լուծում: Բայց Հիսուսը միակ ճիշտ պատասխանն է: Կարևոր չէ, թե սատանան ինչպիսի պատճառ է գործածել ընկճվածություն առաջացնելու համար. Հիսուսը մեզ հաղթության կառաջնորդի, երբ հետևենք Նրան: Նա մեզնից յուրաքանչյուրին ցույց կտա այն, ինչ պետք է անենք՝ ուրախությամբ լի կյանք ապրելու համար:

Այսպիսով, երբ ընկճվածությունը հարձակվում է, պետք է անմիջապես հակառակվենք և հետևենք Աստծո Խոսքին:

Սատանայի հետ միասնաբար մի՛ ջբղվեք

Մի՛ խաղացեք ընկճվածության հետ: Հենց սկսում ենք ընկճվել, պետք է ասենք. «Ես պետք է ինչ-որ բան անեմ, քանի դեռ սա ավելի չի բարդացել»: Եթե այդպես չենք վարվում, հուսահատվում և հետո ընկճվում ենք: Հիսուսը մեզ շնորհել է «հանգած սրտի փոխարեն փառաբանության պատմուճան» (տես Եսայի 61.3): Եթե չենք գործածում այն, ինչ Աստված շնորհել է մեզ, ավելի ու ավե-

լի կիջնենք ընկճվածության փոսը: Եթե գիտենք ճիշտը և չենք անում, «սատանայի հետ սիրախաղով ենք զբաղված»: Կինը և տղամարդը կարող են սիրախաղով զբաղվել, բայց շնության մեջ չմտնել: Մենք սատանայի հետ այսպիսի սիրախաղով չպետք է զբաղվենք: Երբ մի անգամ դուռ ենք բացում, նա հենակետ է ձեռք բերում: Հենակետը ձեռք բերելուց հետո ձեռք կբերի նաև ամրոց: Մեր դեմ ունեցած իր գործունեության մեջ նա շատ հարձակողական է և նպատակասլաց, և մենք նույնպես պետք է հարձակողական լինենք նրա դեմ:

Աստված հայտնեց ինձ, որ չպետք է ինքնախղճահարությամբ զբաղվել: Նա ասաց, որ չեմ կարող լինել և՛ զորավոր, և՛ խղճալի: Տարիներ շարունակ ինքնախղճահարությամբ եմ ապրել: Այդ ժամանակ որոշեցի թույլ չտալ, որ բացասական զգացումները ղեկավարեն կյանքս: Երբ ինչ-որ բան այնպես չէր ընթանում, ինչպես ես էի ցանկանում, սկսում էի խղճալ ինձ: Ես հակառակվեցի այդ զգացմանը: Եթե թույլ տայի, որ դա շարունակվեր, ավելի ու ավելի կընկնեի խղճահարության գիրկը:

Երբ գիտենք, թե որն է ճիշտը, և կանխամտածված ընտրում ենք սխալը, հայտնվում

ենք վատթարագույն վիճակում: Մենք ճանաչողություն և պատասխանատվություն ունենք: Գիտությունն է դա մեզ տալիս:

Կոնֆերանսի ժամանակ, երբ ուսուցանում էի, թե ինչ է մեղքը և ինչպես իշխել դրան, ինչ-որ մեկը պատմեց հետևյալ պատմությունը.

«Մի երիտասարդ աղջիկ քայլում էր սար տանող արահետով: Սկսեց ցրտել: Սար բարձրանալիս մի օձ մոտեցավ նրան և ասաց. «Խնդրո՛ւմ եմ, բարձրացրո՛ւ ինձ, ես մրսում եմ»: Աղջիկն ասաց. «Ես չեմ կարող այդպիսի բան անել»: Օձն ասաց. «Տաքացրո՛ւ ինձ, խնդրո՛ւմ եմ»: Նա համաձայնեց և ասաց. «Դու կարող ես թաքնվել իմ վերարկուի մեջ»:

Օձը կծկվեց, տաքացավ, հետո խայթեց նրան:

Աղջիկը վայր գցեց օձին. «Ես վստահեցի քեզ, իսկ դու խայթեցիր ինձ»:

Օձը պատասխանեց. «Դու գիտեիր, թե ես ինչ եմ, երբ բարձրացրիր ինձ»:

Սատանայի հետ «սիրախաղով զբաղվելիս» միշտ վնասվում ենք: Հրաժարվելով «գովության պատմուճանը» հագնելուց՝ մենք դուռ ենք բացում և տեղիք տալիս ավելի մեծ խնդիրների, որոնք լուրջ հետևանքներ են ունենում:

Անմիջապե՛ս հնազանդվեք ընկճվածությանը

«Արթո՛ւն եղեք, հսկո՛ւմ արեք, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա: Որին հակառա՛կ կանգնեք՝ հավատքով հաստատված, գիտենալով, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհում են, նույն չարչարանքներն են քաշում»:

Ա Պետրոս 5.8,9

Անմիջապես հակառակվելով սատանային՝ կդադարեցնենք ընկճվածության հետ կապված բախումները: Երբ անապատում Հիսուսը երեք անգամ փորձվում էր, Նա անխոհեմ և զգացմունքային չդարձավ: Նա ասում էր. «Գրվա՛ծ է..., գրվա՛ծ է..., գրված է...» (Ղուկ. 4.4,8,10): Մենք այս ձևով պետք է հակառակվենք սատանային, երբ գալիս է փորձելու մեզ դատապարտությամբ, ընկճվածությամբ, խղճահարությամբ կամ մեկ ուրիշ սխալ բանով:

Մենք պետք է գիտակցենք և հիշենք, որ ընկճվածությունը մեր ժառանգության մասը չէ Հիսուս Քրիստոսում: Դա Աստծո կամքը չէ Իր զավակների համար: Ամեն անգամ,

երբ զգում ենք որևէ բան, որ Աստծո կամքը չէ, պետք է վերցնենք վահանը և Աստծո երկսայրի սուրը (տե՛ս Եբր. 4.12): Աստվածաշունչն ասում է, որ եթե հաստատապես հակառակվենք սատանային իր հարձակման ժամանակ, նա կփախչի մեզնից (տե՛ս Հակոբ. 4.7, Ա Պետր. 5.8,9): Այն պահից, երբ ապրում ենք ընկճվածության զգացողություն, որն առաջանում է դատապարտության, հանցանքի, խղճահարության կամ զղջման պատճառով, պետք է հիմնվենք Աստծո Խոսքի վրա և թույլ չտանք, որ բացասական զգացողությունները ճնշեն և ընկճեն մեզ:

Եսայի 61.1-3 խոսքերում տեսնում ենք, որ Հիսուսն Աստծուց օծվեց և ուղարկվեց՝ աղքատներին Ավետարանը քարոզելու, կոտրված սրտերը բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու, կապվածներին արձակելու, բանտի դռները և կուրացած աչքերը բացելու, սգավորներին մխիթարություն և ուրախություն շնորհելու, մոխրի փոխարեն՝ փառք, սգի փոխարեն՝ ուրախության յուղ, և հանգած սրտի փոխարեն՝ գովության պատմուճան տալու:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

«Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ՝ հոգևորապես»:

Հռոմեացիների 8.1

Ըստ այս խոսքի՝ ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են, այլևս դատապարտված չեն սխալի կամ հանցանքի համար: Բայց հաճախ ինքներս ենք մեզ դատապարտում: Կյանքիս մեծ մասն ապրել եմ հանցավորության զգացողությամբ՝ մինչ կսովորեի և կհասկանայի Աստծո Խոսքը: Հանցանքի հանդեպ ունեցած աղոտ զգացումը հետևում էր ինձ ամեն ժամանակ: Բարեբախտաբար, երբ ավելի լավ հասկացա Տիրոջ Խոսքը, հաղթեցի այդ զգացողությունը:

Վերջերս փորձության ենթարկվեցի և զգում էի հանցավորության հին զգացողությունը: Երկու օր պահանջվեց՝ հասկանալու, թե ինչ էր տեղի ունենում: Աստված ինձ կենդանի հայտնություն տվեց հանցանքից և դատապարտությունից ազատ ապրելու մասին: Նա ցույց տվեց, որ մենք ոչ միայն պետք է ներում ստանանք Իրենից, այլև ներենք ինք-

ներս մեզ: Մենք պետք է դադարենք ինքներս մեզ դատապարտելուց, քանի որ Նա արդեն ներել և մոռացել է մեր հանցանքը (տե՛ս Երեմիա 31.34, Գործք 10.15):

Սա չի նշանակում, որ այժմ կատարյալ ենք կամ սխալվելու անընդունակ: Ընդհակառակը՝ պետք է մեր կյանքով հաստատակամություն հանդես բերենք՝ առանց ճնշվելու անցյալում մնացած դատապարտության և հանցանքի բեռից: Երբ ճշմարտապես ապաշխարում ենք մեղքերի համար, և մեր սիրտն ուղիղ է Աստծո առջև, կարող ենք թոթափել հանցանքի և դատապարտության ծանրությունը:

Աստված ոչ միայն տեսնում է, թե ինչ ենք անում, այլ նաև գիտի մեր սրտերը: Նա գիտի, որ եթե մեր սիրտն ուղիղ է, մեր գործողությունները կշտկվեն: Ժամանակին ես ենթարկվում էի հանցանքի և դատապարտության զգացմանը, և ինչ որ անում էի, անհանգստացնում էր ինձ: Յուրաքանչյուր փոքրիկ սխալի համար ինձ հանցավոր և դատապարտված էի զգում: Ի վերջո, ամուսնուս ասացի. «Դե՛յվ, կարծում եմ, որ ինձ վրա հարձակվում է դատապարտության ոգին»:

Ժամանակ առ ժամանակ սա տեղի է ունենում յուրաքանչյուրիս հետ: Հնարավոր է՝ մի օր արթնանանք և, առանց որևէ բացահայտ պատճառի, զգանք, որ մի բան սխալ ենք արել: Եթե այդ զգացողությունը շարունակվում է, կարող ենք ինքներս մեզ հարցնել. «Ինչ է պատահել»:

Նման դեպքերում դիվային զորություններին վրա պետք է հոգևոր իշխանություն գործադրել, որը տրվել է մեզ Հիսուսի արյան և անվան միջոցով: Մենք գործածում ենք Աստծո Խոսքը՝ հաղթելու այն զորություններին, որոնք փորձում են մեզ զրկել Տիրոջ մեջ ունեցած խաղաղությունից և ուրախությունից:

ԱԱՏՎԱԾ ՅՍՆԿՍՆՈՒՄ Է ՕԳՆԵԼ ՁԵԶ

Այն մարդիկ, ովքեր ծնվել են ավելի «կայուն» կամ «ուժեղ» բնավորությամբ, ընկճվածության հետ կապված խնդիրներ չունեն: Բայց կան մարդիկ, ներառյալ վերստին ծնված, Սուրբ Հոգով լցված քրիստոնյաներ, ովքեր ժամանակ առ ժամանակ տառապում են դրանից:

Եթե տառապում եք ընկճվածությունից, հիշե՛ք, որ Աստված ավելի շատ է սիրում

ձեզ, քան կարող եք պատկերացնել, և հոգում է ձեր բոլոր խնդիրների մասին: Նա չի ցանկանում, որ դուք տառապեք: Բայց եթե կրկին ընկճվում եք, ինչը բացառված չէ, չպետք է ձեզ հանցավոր կամ դատապարտված զգաք:

Ես այս գրքի սկզբունքները կյանքում կանոնավոր ձևով կիրառում եմ: Եթե դա չեմ անում, շաբաթվա 4-5 օրը կարող եմ ընկճված լինել:

Իմ կարծիքով՝ անհնար է ընկճվել, եթե միտքը պաշտպանված է: Եսայի 26.3 խոսքն ասում է, որ Աստված մեզ կառաջնորդի և կպաշտպանի կատարյալ և հաստատուն խաղաղության մեջ, եթե մեր միտքն Իր մեջ մնա: Եթե մենք կատարյալ և հաստատուն խաղաղության մեջ ենք, չենք ընկճվի: Մեր խնդիրների իննսունինը տոկոսն սկսվում է մեր մտքից:

> «Հաստատ միտքը պահում ես խաղաղ խաղաղությամբ, որովհետև Քեզ է հուսացած: Հավիտյան Տիրոջը հուսացե՛ք, որովհետև Տեր Եհովան հավիտենական վեմ է»:
>
> Եսայի 26.3,4

6

ՄԵՐԺՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՁԱԽՈՂՈՒՄ ԵՎ ԱՆԱՐԴԱՐԱՅԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Թեև հայրս ու մայրս թողնեն ինձ, բայց Տերն ընդունում է ինձ»:

Սաղմոս 27.10

6

Մերժվածություն, զսխողում և անարդարության համեմատություններ

Մերժվածությունն ընկճվածության պատճառներից է: «Մերժված» նշանակում է անարժեք, անցանկալի: Մենք ստեղծվել ենք ընդունված լինելու, ոչ թե մերժվելու համար: Մերժվածության շնչավոր ցավն ամենախորը տեսակներից է, հատկապես, երբ մերժվում ենք որևէ մեկից, ում սիրում ենք, կամ էլ նրանցից, որոնցից սեր ենք ակնկալում, օրինակ՝ ծնողներից կամ ամուսնուց: Ես ճանաչում էի մի կնոջ, ով խորապես ընկճված էր կյանքում, թեև քրիստոնյա էր և հրաշալի ընտանիք ուներ: Նրա ընկճվածության պատճառն այն էր, որ իրեն որդեգրել էին: Նա մտածում էր, որ ինչ-որ բան սխալ է իր կյանքում, և այդ պատճառով է անցանկալի: Դրանից նա մեծ ցավ էր ապրում իր սրտում, որը ոչնչով չէր ամոքվում: Նա Աստծո սերն

ԸՆԴՈՒՆԵԼՈՒ կարիքն ուներ: Ես շեշտում եմ՝ ընդունելու, քանի որ շատ մարդիկ մտքով համաձայն են, որ Աստված սիրում է իրենց, նույնիսկ ասում են այդ մասին, բայց իրականում այդ սերը չեն ապրում:

Սաղմոս 27.10-ում ասվում է.

> «Թեև հայրս ու մայրս թողնեն ինձ,
> բայց Տերն ընդունում է ինձ»:

Աստված ընդունել և շատ էր սիրել այդ կնոջը, բայց նա կործանում էր իր կյանքը՝ փորձելով ձեռք բերել այն, ինչ երբեք չի ունենա՝ իր երկրային ծնողների սերը: Այս փափագը նրան ընկճել էր: Սատանան օգտվել էր նրա զգացմունքներից՝ այս բաց դռնից: Ընկճվածությունը դարձել էր սովորության պես մի բան: Նա վարժվել էր այդ զգացողությանը:

Հիսուսի միջոցով մենք փրկվեցինք մեր մեղքերից, բայց մեր զգացմունքները չփրկվեցին: Հնարավոր է՝ շարունակենք զգալ շատ բացասական երևույթներ: Բայց երբ Հիսուս Քրիստոսին ընդունում ենք որպես Տեր ու Փրկիչ և հավատում ենք Նրան, ընդունում ենք Սուրբ Հոգու պտուղները: Դրանցից մե-

կը ժուժկալությունն է (տե՛ս Գաղատ. 5.22,23): Սա այն պտուղն է, որը մեզ փրկում է բացասական զգացումից: Մենք սովորում ենք, թե Աստծո Խոսքն ինչ է ասում զգացմունքների մասին, հետո Սուրբ Հոգու օգնությամբ սկսում ենք ղեկավարել դրանք և չարտահայտել մեր մարմնի միջոցով, որն այժմ պատկանում է Հիսուս Քրիստոսին: Չնայած այս կինը քրիստոնյա էր, բայց ապրում էր մարմնի թագավորության մեջ: Նա հետևում էր սովորական ներքին մղումներին: Նա կարիք ուներ ձեռք բերել իր արժանապատվությունը և գիտակցել արժեքն այն փաստի, որ Հիսուսն այնքան սիրեց իրեն, որ մինչև իսկ մահացավ իր համար: Այնուհետև նա պետք է դադարեր իրեն մերժված զգալուց: Ի վերջո, նա հաղթանակ ունեցավ, բայց դա երկարատև ու դժվար պայքարի արդյունք էր:

Մեր կյանքում ընկճվածությունը կարող է լինել մերժվածության հետևանք: Հեշտ չէ հաղթել մերժվածությունը, բայց Հիսուս Քրիստոսի սիրո միջոցով կարող ենք դա անել: Եփեսացիներին ուղղված թղթի 3.18, 19-ում Պողոսն աղոթում էր եկեղեցու համար, որ մարդիկ ճանաչեն իրենց հանդեպ

Աստծո սիրո «լայնությունը, երկարությունը, խորությունը և բարձրությունը»: Նա ասում էր, որ այդ սերն ամեն գիտությունից վեր է: Սպասեք, որ Աստված դրսևորի Իր սերը, և դա կհաղթի մերժվածությունը, որ ապրել ենք ուրիշների կողմից: Այս գրքի վրա աշխատելուս ընթացքում ստացա մի հեռախոսազանգ. ինձ տեղեկացրին, որ մի ճանաչված հովիվ ինձ քարոզելու է հրավիրում իրենց եկեղեցում:

Նա մեծ դահլիճ ուներ և իր եկեղեցում հրաշալի ծառայություններ էր անցկացնում, բայց մյուս ծառայողներին երբեք թույլ չէր տալիս օգտագործել իր եկեղեցու դահլիճը: Աստված նրա սրտում ցանկություն էր դրել մեզ թույլտվություն տալու: Մենք դադարեցրել էինք մեր ծառայությունները, քանի որ չէինք տեղավորվում նախկինում զբաղեցրած տարածքում: Մեր ծառայությունները վերսկսելու միակ հնարավորությունը ավելի մեծ տարածք վարձելն էր, որը շատ թանկ էր:

Հաճախ մենք անուշադրության ենք մատնում կատարված երևույթները՝ չգիտակցելով, որ դրանց միջոցով Աստված Իր սերն է դրսևորում մեր հանդեպ: Մենք միայն պետք

է սպասենք: Աստծո սերը մեզ կպաշտպանի ընկճվածությունից: Երբ մարդիկ մերժում են մեզ, Հիսուսն է ընդունում:

Ղուկաս 10.16 խոսքում գրված է.

> «Ձեզ լսողը Ինձ է լսում, և ձեզ անարգողը Ինձ է անարգում, և Ինձ անարգողը Ինձ ուղարկողին է անարգում»:

Եթե նույնիսկ ինչ-որ մեկն արհամարհում է մեզ, Հիսուսն ընդունում է: Չարություն է, երբ մի մարդ մերժում է մյուսին: Հակոբոս 2.8,9 խոսքերը սովորեցնում են, որ սերը նոր օրենք է. «…Բայց եթե աչառություն եք անում, մեղք եք անում՝ հանդիմանված օրենքից, ինչպես օրինազանցներ»: Մենք խախտում ենք սիրո օրենքը: Մերժվածությունը չար բան է, չպետք է չարին թույլ տանք ղեկավարել մեր զգացմունքները և ընկճել մեզ: Հռոմեացիներին ուղղված թղթի 12.21 խոսքում ասվում է. «Մի՛ հաղթվիր չարից, այլ բարիով հաղթի՛ր չարին»: Մեր դեմքի ժպիտը և կանխամտածված ուրախ տրամադրությունը կհաղթի մերժվածության, չարության, ընկճվածության հետևանքները:

Ձախողուիմ

Ըստ հասարակական կարծիքի՝ հաղթանակն ամեն ինչ է, իսկ հաջողություն՝ նշանակում է ապրել առանց ձախողման: Ես հավատում եմ, որ ձախողումը ճշմարիտ հաջողության մասն է: Նկատի ունեմ հետևյալը. յուրաքանչյուր ոք իր ճանապարհին մի քանի կարևոր բան ունի սովորելու: Մեկը խոնարհությունն է: Մարդիկ խոնարհությունն ինքնաբերաբար ձեռք չեն բերում: Բոլորս էլ պայքարում ենք հպարտության դեմ: Մեր մի քանի ձախողումները մեզ խոնարհություն են սովորեցնում:

Պետրոսը զորավոր առաքյալ էր: Նա հնազանդվում էր Աստծուն, և Աստված նրա միջոցով մեծ գործեր էր անում Իր թագավորության համար: Բայց Պետրոսը ձախողվեց, երբ երեք անգամ ուրացավ Հիսուսին: Պողոսը նույնպես Աստծով զորավոր մարդ էր, սակայն հայտարարում էր, որ տկարություններ ունի: Դավիթը հզոր թագավոր էր, սաղմոսերգու և մարգարե, սակայն նա ձախողվեց՝ շնություն գործելով Բերսաբեի հետ և կազմակերպելով նրա ամուսնու՝ Ուրիայի սպանությունը:

Ես ներկայումս հաջողություններ ունեմ ծառայության մեջ, բայց համոզված եմ, որ սխալներ եմ թույլ տվել և բազում անգամներ ձախողվել իմ ճանապարհին: Երբեմն կարծում էի, թե լսել եմ Աստծուց, այնուհետև հայտնաբերում էի, որ չեմ լսել: Ես բաներ էի անում, որոնք Աստծո կամքով չէին, և ստիպված էի ետ կանգնել՝ մնալով ամոթով: Ես միշտ ձախողվում էի մարդկանց հետ սիրով և ողորմածությամբ վարվելու հարցում, այն սիրո, որ Հիսուսն ունի: Իմ ձախողումները հուսախաբում, հուսահատեցնում և նույնիսկ ընկճում էին ինձ: Հետո գիտակցեցի, որ Աստված իմ տկարությունները բարիին գործակից է դարձնում՝ աճեցնելով իմ անձը:

Դուք չեք ձախողվի, եթե չփորձեք որևէ բան անել: Ես մտածում էի՝ սատանան, հնարավոր է, ինձ վայր գցի, բայց չի կարող հաղթել: Ինչ-որ գործում ձախողվելը և ձախողակ լինելը միանգամայն տարբեր բաներ են: Մենք պետք է սովորենք առանձնացնել այս երկուսը՝ «ով ենք» և «ինչ ենք անում»: Հնարավոր է՝ «անեմ» ինչ-որ բան և ձախողվեմ, բայց «ես» ձախողակ չեմ: Ես Աստծո զավակ եմ, ով շարունակում է փոխվել՝ նմանվե-

լով Աստծո պատկերին, որ փառքից փառք է գնում (տես Բ Կորնթ. 3.18): Իրականում, ձախողումը չէ, որ ընկճվածության պատճառ է հանդիսանում, այլ մեր վերաբերմունքը: Եթե հավատանք, որ Աստված ավելի մեծ է, քան մեր ձախողումները, դրանք իշխանություն չեն ունենա մեզ վրա: Մեր տկարություններ-րը հնարավորություն են տալիս Աստծուն, որ ցույց տա Իր զորությունը:

Հռոմեացիներին ուղղված թղթի 5.20-ում ասվում է. «...Բայց որտեղ ավելի եղավ մեղ-քը, այնտեղ ավելի ևս շատացավ շնորհքը»: Եթե այսպես հավատանք, չենք ձախողվի:

Մի՛ ընկճվեք տկարություններից և ձախո-ղումներից: Ցնծացե՛ք՝ իմանալով, որ Հիսուսի շնորհիվ չեք մնա այդ վիճակում: Առանց Հի-սուսի՝ մարդիկ իրենց կյանքում ձախողվելիս միայն ընկճվածություն կունենան, բայց մենք կարող ենք գնալ Հիսուսի մոտ: Սա պետք է երջանկացնի մեզ և ոչ թե տխրեցնի: Հի-շե՛ք, որ դուք ընտրված եք Աստծո կողմից: Նա գիտեր՝ ում է ընտրում: Եփեսացիներին ուղղված թղթի 1.4-ում ասվում է. «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով աշխարհի ստեղծվելուց առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք

Նրա առջև սիրով»: Նա արդեն իսկ գիտեր մեր տկարությունները, թերությունները, նույնիսկ այն, թե երբ կձախողվենք, բայց Նա ասում է. «Ես ցանկանում եմ քեզ»: Եփեսացիներին ուղղված թղթի 1.5-ում ասվում է, որ Նա մեզ նախասահմանեց որդեգրվելու և Իր զավակները լինելու:

Կարծում եմ՝ երջանիկ պետք է լինենք, որ Աստված մեր Հայրն է: Աստծո հետ ամեն բան ի բարին է շրջվում: Սրա համար եկեք ցնծանք՝ տխրելու փոխարեն:

Անարդարության համեմատություններ

Հաճախ մեզ ուրիշների հետ համեմատելն է ընկճվածության պատճառ դառնում: Մենք կարող ենք ուշադրություն դարձնել ուրիշներին և մտածել, թե ինչու նման չենք նրանց, ինչու չգիտենք այն, ինչ նրանք գիտեն, ինչու չունենք այն, ինչ նրանք ունեն, ինչու չենք կարող անել այն, ինչ նրանք են անում: Բայց հարկավոր է նշել, որ սատանան երբեք ցույց չի տալիս, թե ինչ չունեն նրանք: Ուրիշները կարող են ունենալ այն, ինչ մենք չունենք, բայց մենք կարող ենք ունենալ այն, ինչ նրանք չունեն: Պետք է հավատանք, որ

Աստված մեզնից յուրաքանչյուրին սպառազինում է այն կոչման համեմատ, որի համար կանչել է: Եթե չունեմ տվյալ բանը, ուրեմն դրա կարիքը չունեմ, կամ էլ դեռևս ժամանակը չէ դա ունենալու:

Ես շատ դժբախտ, ընկճված օրեր եմ անցկացրել՝ ինձ ուրիշների հետ համեմատելով: Ինչո՞ւ չեմ կարող լինել հոգատար՝ ինչպես Դեյվը: Ինչո՞ւ չեմ կարող լինել սիրալիր, ողորմած և հնազանդ՝ ինչպես իմ հովվի կինը: Ինչո՞ւ չեմ կարող կարել հարևանուհուս նման: Ինչո՞ւ չունեմ ավելի արագ գործող մարսողություն, որ ավելի շատ ուտեմ և չգիրանամ: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ…

Աստված տվեց այն նույն պատասխանը, որ տվել էր Պետրոսին, երբ նա իրեն համեմատում էր Հովհաննեսի հետ: Հովհաննեսի Ավետարանի 21.18-22 խոսքերում Հիսուսը Պետրոսին ասաց, որ նա չարչարվելու է: Նա խոսում էր այն մահվան մասին, որով Պետրոսը մեռնելու էր՝ դրանով փառավորելով Աստծուն:

Պետրոսը դիմեց Հիսուսին՝ ի՞նչ է լինելու Հովհաննեսի հետ: Հիսուսը քաղաքավարությամբ պատասխանեց. «Եթե ես կամենում եմ, որ սա մնա, մինչև Ես գամ, քե՞զ ինչ, դու Իմ ետևի՛ց եկ» (խոսք 22):

Ինձ թվում է՝ Հիսուսը Պետրոսին քաղաքավարությամբ ասում էր, որ դա նրա գործը չէ, և նա չպետք է իրեն համեմատի Հովհաննեսի հետ: Աստված մեզնից յուրաքանչյուրի համար անհատական ծրագիր ունի, և մենք չենք կարող հասկանալ, թե ինչ է անում Նա և ինչու է անում:

Մենք մարդկանց որպես չափանիշ ենք ընդունում, բայց նրանք չեն կարող չափանիշ լինել, քանի որ Աստված է նոր չափանիշ դնում յուրաքանչյուրի կյանքում: Բոլորս էլ ունենք տարբեր մատնանշաններ, որոնք ապացույց են, որ չպետք է համեմատվել միմյանց հետ:

Մեզ ուրիշների հետ համեմատելն անարդարացի է: Դա անարդարացի է մեր, նրանց և Աստծո հանդեպ, ճնշում է փոխհարաբերությունները և սահմանափակում Աստծուն: Աստված կարող է ավելին անել նրա միջոցով, ով կհավատա և կվստահի Իրեն: Գաղատացիներին ուղղված թղթի 5.26 խոսքը մեզ ուսուցանում է, որ չլինենք միմյանց հանդեպ «չար» կամ «նախանձ» և չմրցակցենք միմյանց հետ:

Առակաց գրքի 14.30-ում ասվում է. «…նախանձը (չարությունը և զայրույթը)

փտություն է ոսկորներին»: Ընկճվածությունը ճիշտ այդպիսին է, և ամեն բան թվում է վերջացած:

Գաղատացիներին ուղղված թղթի 6.4-ում գրված է. «Թո՛ղ ամեն մեկը իր գործը կշռի, և ապա միայն իր անձի վրա պարծանք կունենա, և ոչ թե ուրիշի հետ համեմատվելով»: Այլ խոսքով՝ մեր նպատակը պետք է լինի «լավագույնը լինել» անելու այն, ինչին հավատում ենք, և դա պետք է անենք՝ առանց ձգտելու ինչ-որ մեկից «ավելի մեծ լինել»՝ հաճեցնելով մեզ:

Երբ մեր, որպես անհատի, արժեքը հաստատապես արմատավորված է Քրիստոսում, մենք ազատ ենք մրցակցության և համեմատության տանջանքից: Այս տեսակի ազատությունն ուրախություն է արձակում: Ընկճվածությունն արդյունքն է՝ համեմատելու, ուշադրություն դարձնելու, թե ինչ չունենք և ինչ չենք կարող անել: Ուրախությունն արդյունքն է՝ շնորհակալ լինելու ամեն մի փոքր բանի համար, որ ունենք: Մենք օրհնված ենք՝ ունենալով կյանք և ճանաչելով Հիսուսին որպես մեր Տիրոջ: **Ընկճվածությունն ընկճվածություն է առաջացնում**

Մեր ընկերակցությունը շատ կարևոր է, քանի որ մենք կարող ենք նմանվել այն մարդկանց, որոնք շրջապատում են մեզ: Դանիելն անկեղծության և գերազանցության մարդ էր, նրա ընկերները՝ նույնպես: Դանիելը փոխզիջման չգնաց և ո՛չ էլ նրա ընկերները՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը: Ընկճված, մռայլ և բացասական մարդը տհաճ է հասարակության համար: Շրջապատված լինելով այդպիսի մարդկանցով՝ կհայտնաբերենք (երբ զգույշ չենք), որ սկսում ենք զգալ այն, ինչ ընկճված մարդը:

Երբ շրջապատված եք ընկճված մարդկանցով, ծածկե՛ք ձեզ Հիսուսի արյամբ՝ որպես պաշտպանություն ընկճվածության ոգու դեմ: Վստա՛հ եղեք, որ դուք ավելի հարձակողական եք ընկճվածության դեմ, քան ընկճվածությունը՝ ձեր:

Սաղմոս 1.1-ը մեզ հորդորում է՝ չգնալ ամբարիշտների խորհրդի մեջ: Ես հավատում եմ, որ պետք է օգնել մարդկանց, և սա վերաբերում է նաև ընկճվածներին, բայց երբեմն նրանք օգնություն չեն ցանկանում. նրանք ուղղակի ցանկանում են լինել ընկճված:

Ես գործ եմ ունեցել մարդկանց հետ, որոնք շատ բացասական էին տրամադրված: Եվ կարևոր չէ, թե ինչ էի փորձում անել նրանց համար, նրանց վերաբերմունքը մնում էր նույնը՝ նյարդային և բացասական: Ես ինքս շատ տարիներ եղել եմ այդ վիճակում, և իսկապես նյարդայնանում էի, երբ ինչ-որ մեկը փորձում էր քաջալերել ինձ: Ես լավ եմ հիշում, թե ինչպես էր Դեյվը շարունակում երջանիկ լինել՝ չնայելով իմ մռայլությանը: Նրա այդ ուրախությունը զայրացնում էր ինձ:

Ընկճված մարդիկ ցանկանում են, որ ուրիշներն էլ ընկճվեն: Ուրախությունը բարկացնում է նրանց: Իրականում դա բարկացնում է չար ոգուն, որը հարստահարում է նրանց: Ես չեմ ասում, որ բոլոր ընկճված մարդիկ գտնվում են դևի ազդեցության տակ: Ես ասում եմ, որ ընկճվածությունն արդյունք է չար ոգու գործունեության, որը ճնշում է մեզ:

Մենք գիտենք, որ բոլոր չար և վտանգավոր երևույթները սատանայից և դևերից են, դրա համար եկեք տեսնենք, թե ինչ է դա, և չվախենանք:

Եթե ընկճվածության ոգին հարձակվում է ձեզ վրա, և դուք ցանկանում եք հաղթել

դրան, ամենակարևոր բաներից մեկը, որ կարող եք անել՝ ուրախ մարդկանց հետ ժամանակ անցկացնելն է: Դեյվի ուրախությունն ինձ բարկացնում էր իմ ընկճված օրերին, բայց այդ նույն հաստատակամությունն ու ուրախությունը նաև ձգում էր ինձ:

Նրա հետ լինելով՝ սովորեցի, թե ինչպես վարվել այդ դեպքերում: Նկատեցի, թե ինչպես է նա վերաբերվում միևնույն իրավիճակներին և սկսեցի գիտակցել, որ նրա ուրախությունը պայմանավորված է ոչ թե կյանքի երևույթներով, այլ դրանց հանդեպ վերաբերմունքով:

Հոգիները և օծությունները փոխանցվող են: Ահա թե ինչու ենք ձեռք դնում մարդկանց վրա, որն աստվածաշնչյան վարդապետություն է: Յոթանասուն մարդ ընտրվեց՝ Մովսեսին ծառայության մեջ օգնելու: Նախ՝ Աստված ասաց, որ նրանց բերեն ժողովի վրանի մոտ և կանգնեցնեն Մովսեսի կողքին, հետո ասաց, որ կգա և կվերցնի Մովսեսի մեջ գտնվող Հոգին ու կդնի նրանց մեջ: Զորավոր սկզբունք է, այդպես չէ՞:

Ես փոփոխության կարիք ունեի: Կարևոր բաներից մեկն իմ տրամադրության հաս-

տատակամությունն էր: Աստված գիտեր, թե ինչու էի այդպիսին: Տարիների ընթացքում շատ բաներ էին կատարվել ինձ հետ, որոնք իմ շնչի (զգացմունքային էության) մեջ մռայլություն էին ձևավորել: Բայց Աստված բժշկեց ինձ: Նա իմ անձնական կյանքը շրջապատեց մարդկանցով, որոնք չափազանց հաստատակամ էին:

Իմ ամուսինն առաջինն էր: Կային նաև ամուսնացած զույգեր, որոնք տասնմեկ տարի ապրեցին մեզ հետ, և օգնում էին ծառայության մեջ, հոգ տանում մեր տան մասին, երբ մենք ճամփորդում էինք: Թե՛ Պողոսը, և թե՛ Ռոքսանը շատ հաստատակամ էին:

Այս մարդկանց հետ ամեն օր զրուցում էի, ճաշում, գեղարվեստական կինոնկարներ դիտում, խանութ, եկեղեցի գնում, ծրագրեր կազմում և այլն: Այնքան երջանիկ, հաստատակամ մարդկանցով էի շրջապատված, որ նման էի մի մեծ բծի կամ արատի՝ մինչև փոխվեցի: Նրանց ուրախությունը և հաստատակամությունը համոզեցին ինձ, և ես ուրախ եմ դրա համար: Ահա թե ինչ կարող են անել երջանիկ, ուրախությամբ լցված, հաստատակամ մարդիկ:

Այսպիսով, եթե դուք պատերազմում եք ընկճվածության դեմ, հիշե՛ք՝ ձեր ընկերակցությունները շատ կարևոր են: Մի՛ ընկերակցեք ընկճված մարդկանց, եթե ինքներդ կարիք ունեք ազատվելու ընկճվածությունից:

Երբ ընկճվածության պահեր ենք ապրում և միաբանվում ընկճված, հուսախաբված մարդկանց հետ, հարկավոր է կանխամտածված կերպով ծիծաղել, երգել, ցնծալ, աղաղակել և մտածել երջանիկ բաների մասին:

7

ԼՍԵ՛Ք, ԹԵ ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԱՍՏՎԱԾ ՁԵՐ ՄԱՍԻՆ

«Իր փառավոր շնորհքի գովաաանքի համար, որ Նրանով շնորհք ցույց տվեց մեզ այն Սիրելիով»։

Եփեսացիների 1.6

7

Լսե՛ք, թե ինչ է ասում Աստված ձեր մասին

Աստված չի ցանկանում, որ մեզ դատապարտված և ընկճված զգանք: Նա ցանկանում է՝ գիտակցենք, որ ընդունելի ենք հենց այնպես, ինչպես կանք:

Սատանան շարունակ փորձում է ասել, թե ինչ չենք, բայց Աստված ասում է, թե ով ենք մենք՝ Իր սիրելի զավակները:

Աստված մեզ երբեք չի հիշեցնում, թե որքան խորն ենք ընկել, այլ հիշեցնում է, թե որքան անգամներ ենք ոտքի կանգնել, հաղթել, ճիշտ գործել: Նա մեզ հիշեցնում է, թե որքան թանկագին ենք Իր համար, և թե որքան շատ է Նա մեզ սիրում:

Սատանան ասում է, որ Աստված չի կարող ընդունել մեզ, որովհետև կատարյալ չենք: Բայց Աստված ասում է, որ ընդունված ենք Իր Սիրելի Որդու կատարած գործի միջոցով (տե՛ս Եփես. 1.6):

Աստված ցանկանում է, որ մենք հասկանանք և հավատանք, որ Իր ձեռքը մեզ վրա է, Իր հրեշտակները հսկում են մեզ, Իր Հոգին մեր մեջ է և առաջնորդում է մեզ ամեն ինչում:

Նա ցանկանում է՝ հավատանք, որ Հիսուսը մեր բարեկամն է, և երբ քայլենք Նրա հետ, օրեցօր հրաշալի բաներ տեղի կունենան մեր կյանքում:

Եթե մենք լսենք Աստծուն, Նա կքաջալերի և կտա խաղաղություն՝ անցյալի համար, ուրախություն՝ ներկայի համար, և հույս՝ ապագայի համար:

Հիշե՛ք՝ Տիրոջ ուրախությունը մեր զորությունն ու ամրոցն է:

Ամփոփում

Այսպիսով, կիրառելով ցնծության սկզբունքը՝ ձեր իրավիճակը և կյանքը կփոխվեն:

Մաս 2

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԽՈՍՔԵՐ

Սուրբգրային խոսքեր՝ հաղթահարելու ընկճվածությունը

«Արդարներն աղաղակում են, և Տերը լսում է ու իրենց ամեն նեղությունից փրկում է նրանց»:

Սաղմոս 34.17

«Սպասելով սպասեցի Տիրոջը, և Նա դեպի ինձ նայեց ու աղաղակս լսեց: Եվ ինձ հանեց կորստի հորից՝ տիղմոտ ցեխից, և վեմի վրա կանգնեցրեց ոտքերս և գնացքս հաստատեց: Եվ նոր երգ դրեց իմ բերանում՝ մեր Աստծո օրհնությունը, շատերը կտեսնեն և կվախենան ու Տիրոջը կհուսան»:

Սաղմոս 40.1-3

«Իմ անձը պինդ Քո ետևից է ընկնում. Քո աջը հաստատ պահում է ինձ»:

Սաղմոս 63.8

«Ես սպասում եմ Տիրոջը. իմ անձն սպասում է, և ես Նրա Խոսքին եմ հուսացած»:

Սաղմոս 130.5

«Բուժող լեզուն կենաց ծառ է, բայց լեզվի վրայի նենգությունը՝ հոգու վերք»:

Առակաց 15.4

«Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա»:

Եսայի 60.1

«Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, ըստ որում՝ Տերն օծել է Ինձ. Նա ուղարկել է Ինձ աղքատներին ավետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու և կապյալներին՝ արձակելու: Տիրոջ համար հրատարակելու ընդունելի տարին, և վրեժխնդրության օրը՝ մեր Աստծո համար: Բոլոր սգավորներին մխիթարելու համար: Սիոնի սգավորների համար որո-

շելու, որ նրանց փառք տրվի մոխրի տեղ, ուրախության յուղ՝ սուգի տեղ, գովության պատմուճան՝ հանգած սրտի տեղ: Եվ նրանց պիտի կոչեն արդարության բևեկնիներ, որ Տերը տնկել է Իր փառավորության համար»:

Եսայի 61.1-3

«Որովհետև Աստված, որ ասաց՝ խավարից լույս ծագի, Ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի անձի մեջ»:

Բ Կորնթացիների 4.6

«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում:

Այսուհետև, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, պարկեշտ, արդար, սուրբ, սիրուն, բարի անուն ունեցող, առաքինի և գովելի, այ՛ն մտածեք»:

Փիլիպեցիների 4.6-8

Աղոթք՝ ընկճվածության դեմ պայքարելու համար

Հայր, Հիսուսի անունով՝ գալիս եմ Քո առջև՝ բերելով Քեզ իմ ընկճվածության բեռը: Ես այս բեռի կարիքը չունեմ, և սա թողնում եմ Քո ոտքերի մոտ: Փոխարինի՛ր այս ընկճված զգացողությունը Քո ուրախությամբ: Քո շնորհքը բավարար է ինձ:

Ես համաձայն եմ Քո Խոսքին: Ես կարիք ունեմ լինելու Քո ներկայության մեջ: Քո մեջ է իմ կյանքը: Շնորհակալությո՛ւն:

Աղոթք՝ աստղ հեռ անձնական հաղորդակցման համար

Հիսուսն ամեն բանից առավել ցանկանում է ձեզ փրկել և լցնել Սուրբ Հոգով: Եթե դեռ Հիսուսին՝ Խաղաղության Իշխանին, չեք հրավիրել լինելու ձեր Տերը և Փրկիչը, արեք դա հիմա: Աղոթեք հետևյալ աղոթքը, և եթե իսկապես անկեղծ եք, կսկսեք նոր կյանք՝ Քրիստոսով:

Հայր, Դու այնպես սիրեցիր աշխարհը, որ Քո Միածին Որդուն տվեցիր մեր մեղքերի համար, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա: Քո Խոսքն ասում է, որ փրկված ենք շնորհքով՝ հավատքի միջոցով, և դա պարգև է Քեզնից: Մենք ոչինչ չենք կարող անել փրկությունը վաստակելու համար:

Ես հավատում և դավանում եմ, որ Հիսուս Քրիստոսը Քո Որդին է՝ աշխարհի Փրկիչը: Ես հավատում եմ, որ Նա վերցրեց իմ բոլոր մեղքերը, մահացավ խաչափայտին ինձ համար՝ վճարելով մեղքերիս գինը:

Հավատո՛ւմ եմ, որ Դու Հիսուսին հարություն տվեցիր մեռելներից:

Խնդրո՛ւմ եմ, որ ներես իմ մեղքերը: Ես Հիսուսին դավանում եմ որպես իմ Տիրոջ: Ըստ Քո Խոսքի՝ ես փրկված եմ և հավիտենությունը կանցկացնեմ Քեզ հետ: Շնորհակա՛լ եմ, Հա՛յր: Ես երախտապարտ եմ, Հիսուսի անունով, ամե՛ն:

Ուշադրությո՛ւն դարձրեք հետևյալ խոսքերին՝ Հովհաննես 3.16, Եփեսացիների 2.8,9, Հռոմեացիների 10.9,10, Ա Կորնթացիների 15.3,4, Ա Հովհաննես 1.9, 4.14-16, 5.1,12,13:

Հեղինակի մասին

Ջոյս Մայերն Աստծո Խոսքն ուսուցանում է դեռևս 1976 թվականից և ամբողջական ծառայության է անցել 1980 թվականից: Որպես հովվի գործակից «Կյանք» Քրիստոնեական կենտրոնում, որը գտնվում է Միսսուրիի Լյուիս քաղաքում, նա զարգացրել, կոորդինացրել և սովորեցրել է «Կյանք՝ Խոսքի մեջ» անվանումով շաբաթական հավաքույթներում: Հինգ տարի անց Աստված այդ աշխատանքն ավարտին է մոտեցնում՝ առաջնորդելով նրան հաստատելու իր անձնական ծառայությունը և այն կոչելու «Կյանք՝ Խոսքի մեջ» անունով:

Ջոյսի «Կյանք՝ Խոսքի մեջ» ռադիոհաղորդումը հեռարձակվում է ավելի քան 250 ազգային ռադիոկայաններով: 1993 թվականին հեռարձակվեց «Կյանք՝ Խոսքի մեջ՝ Ջոյս Մայերի հետ» 30 րոպեանոց հեռուստածրագիրը, որը տարածվեց ամբողջ Միացյալ Նահանգներով, ինչպես նաև մի քանի արտասահմանյան երկրներով: Նրա ուսուցողական տեսահոլովակներից օգտվում են շատ երկրներում: Նա հաճախ է ճամփոր-

դում՝ ուսուցանելով «Կյանք՝ Խոսքի մեջ» խոր-
րագրով կոնֆերանսների ընթացքում՝ հան-
դես գալով տեղական եկեղեցիներում: Ջոյսը
և ամուսինը՝ Դեյվը, ով «Կյանք՝ Խոսքի մեջ»
ծառայության ֆինանսների կառավարիչն է,
ամուսնացել են ավելի քան 31 տարի առաջ և
ունեն չորս երեխա: Երեքն ամուսնացած են,
իսկ կրտսեր որդին ներկայումս իրենց հետ
ապրում է Ֆենտոնում, Միսսուրիի Լյուիս քա-
ղաքի արվարձանների մոտ:

Ջոյսը հավատում է, որ իր կյանքի կոչու-
մը՝ հավատացյալներին Աստծո Խոսքի մեջ
հաստատելն է: Նա ասում է. «Հիսուսը մա-
հացավ, որ ազատի գերիներին, բայց կան
քրիստոնյաներ, որոնք շատ քիչ հաղթութ-
յուններ ունեն կյանքում, կամ էլ, առհասա-
րակ, չունեն»: Շատ տարիներ առաջ իրեն
հայտնաբերելով նույն իրավիճակում և Աստ-
ծո Խոսքը կիրառելով՝ նա ձեռք է բերում
ազատություն: Ապրելով հաղթության կյանք՝
Ջոյսը սպառազինվում է՝ գերիներին ազա-
տելու և «մոխրի փոխարեն փառք» բերելու:

Ջոյսը շնչավոր բժշկության վերաբերյալ և
դրա հետ կապված թեմաներով ուսուցանել է
տարբեր երկրներում՝ օգնելով հազարավոր
մարդկանց: Նա ձայնագրել է ավելի քան 165

տարբեր ձայներիզների ալբոմ, և հեղինակ է 25 գրքերի, որոնք արժեքավոր են Քրիստոսի մարմնի համար: Նրա «Շնչավոր բժշկության ձևավորում»-ը ունի 23 ուսուցման ժամեր: Այս ծրագրում ներկայացնում է հետևյալ նյութերը՝ «Վստահություն», «Մոխրի տեղ՝ փառք» (ներառում է ծրագիր), «Ղեկավարել զգացմունքները», «Վրդովմունք, վիրավորվածություն և աններողամտություն», «Մերժվածության արմատը» և «Բժշկել սրտով կոտրվածներին» 90 րոպեանոց աստվածաշնչյան խոսքերից կազմված ձայնասկավառակը:

Ջոյսի «Մտքի ձևավորում» գիրքը նկարագրում է մտքի թեմային նվիրված հինգ տարբեր ձայներիզային քարոզչություններ, որոնք ներառում են «Մտավոր ամրոցներ և մտածողություններ», «Անապատային մտածողություն», «Մարմնավոր միտք», «Անհանգստություն և մտահոգված միտք», «Միտք, բերան, տրամադրություն և դիրք» թեմաները: Փաթեթը նաև պարունակում է Ջոյսի «Միտքը կռվի դաշտն է» 260 էջանոց հզոր գիրքը: Նա ունի սիրո թեմային նվիրված երկու տեսաժապավենային քարոզչություն՝ «Սերը՝...» և «Սերը՝ որպես բարձրագույն զորություն» վերնագրերով:

Գրե՛ք Ջոյս Մայերի աշխատասենյակ՝ նյութերի,
կատալոգների և մանրամասն տեղեկությունների
համար, եթե ձեզ հետաքրքրում է,
թե ինչպես ձեռք բերել այն տեսաժապավենները,
որոնց կարիքն ունեք՝ ձեր կյանքում կատարյալ
բժշկություն բերելու համար:

Ուրախությունը մնում է, երբ գալիս է աստվածային ձևով

Արդյո՞ք դուք հաճախակի եք հուսահատություն և ձանձրույթ ապրում՝ առանց որևէ բացահայտ պատճառի: Կամ էլ շատ հիասթափություններ եք ապրել և չեք կարողանում դուրս գալ հուսահատությունից: Ինչպիսին էլ լինի ընկճվածության պատճառը, աղբյուրը միշտ նույնն է՝ սատանան:

Ամենալավ վաճառվող գրքերի հեղինակ Ջոյս Մայերը զորավոր իմացություն է տալիս Սուրբ գրքի խոսքերից և իր անձնական փորձառությունից՝ օգնելով հաղթահարել ընկճվածությունը: Դուք կսովորեք, թե ինչպես քայլել հավատքով և ոչ թե զգացմունքներով՝ կանխամտածված ցնծության զորության և ներման միջոցով:

Ուրախությունն ինչ-որ բան չէ, որ փորձում ենք կեղծել՝ որպես հավատացյալներ: Ուրախությունն արդեն իսկ մեր մեջ է և սպասում է ազատ արձակման: Հաղթանակը ձերն է՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Բարձրացեք Նրա զորությամբ և եկ վերցրեք ձեր ուրախությունն ազատագրելու իրավունքն այսօր: